

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՈՐՈՇՈՒՄ N 7/2**

4-րդ մայիսի 2017 թվականի

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՇ ՏԵՍԱԿՆԵՐԻ  
ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎՈՂ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ  
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարանի 2016-2020թթ զարգացման ռազմավարական ծրագրի» 4.3.-րդ խնդրի 1-ին կետի պահանջը և ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 49-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշմամբ հաստատված կարգի 1-ին և 2-րդ բաժիններում սահմանված աշխատանքների (գործունեության) հաշվարկման մասերն ուժի մեջ են մտնում 2016-2017 ուսումնական տարվանից: Կարգի 1-ին և 2-րդ բաժիններում սահմանված աշխատանքների (գործունեության) համար լրավճարների վճարման և կարգի 3-րդ բաժնով սահմանված մրցույթի արդյունքում լրավճարների հաշվարկման և վճարման մասերն ուժի մեջ են մտնում 2017թ. հուլիսի 15-ից:

**ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ**

Հաստատված է  
ԵՊՀ գիտական խորհրդի  
2016 թ. մայիսի 4-ի նիստում  
ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ  
Ա. Հ. Սիմոնյան  
«4» մայիսի 2017թ.

**Կ Ա Ր Գ**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՇ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎՈՂ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ**

Սույն կարգը սահմանում է Երևանի պետական համալսարանի աշխատողներին վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը:

Երևանի պետական համալսարանի աշխատողներին լրավճարը վճարվում է գիտահետազոտական, ուսումնամեթոդական, կազմակերպչական աշխատանքների որոշ տեսակների կատարման համար՝ համաձայն սույն կարգի:

**1. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎՈՂ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ**

1.1. Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) աշխատողներին գիտահետազոտական գործունեության որոշ տեսակների իրականացման համար վճարվում են լրավճարներ՝ համաձայն Աղյուսակ 1-ի.

**Աղյուսակ 1**

Հ/Հ	ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	ՄԻԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ (Ծ-Ն) (ՀՀ ԴՐԱՄ)	ՄԵՎ ԱՇԽԱՏՈՂԻՆ ՀԱՄԱՆԵԼԻՔ ԼՐԱՎՃԱՐԻ ՉՍՓԸ
1.	Հոդվածի տպագրում ազդեցության գործակցով գիտական հանդեսներում	150000	D-ն բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
2.	Հոդվածի տպագրում «Web of Science» կամ «Scopus» շտեմարաններում ընդգրկված գիտական հանդեսներում	60000	D-ն բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
3.	Հոդվածի տպագրում արտասահմանյան գիտական հանդեսներում (միայն ոչ բնագիտական մասնագիտությունների դեպքում)	60000	D-ն բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
4.	Հոդվածի տպագրում (առնվազն 5 էջ	50000	D-ն բաժանած ՀՀ քաղաքացի

	ծավալով՝ առանց ամփոփումների) «ԵՊՀ-ի տեղեկագրում», «Բանբեր Երևանի համալսարանի» և «Հայագիտության հարցեր» գիտական հանդեսներում		համահեղինակների թվին
5.	Հոդվածի տպագրում (առնվազն 5 էջ ծավալով) ՀՀ ԲՈՀ-ի կողմից երաշխավորված գիտական հանդեսներում	25000	D-ն բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
6.	Հոդվածի տպագրում արտասահմանյան համահեղինակների հետ	60000	D-ն բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
7.	Թեզիսի տպագրում արտասահմանյան համահեղինակների հետ միջազգային գիտաժողովում	15000	D-ն բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
8.	Մենագրության հրատարակում (ծավալն առնվազն A5 ձևաչափով 120 էջ, երկու մասնագիտական գրախոսի և համապատասխան ֆակուլտետի գիտխորհրդի երաշխավորության առկայություն)	200000	D-ն բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
9.	Դոկտորական ատենախոսության պաշտպանություն	300000	D-ն վճարվում է դոկտորական ատենախոսություն պաշտպանող աշխատողին
10.	Վերջին երկու տարում ԵՊՀ-ում աշխատած հայցորդի (ասպիրանտի) ատենախոսության ղեկավարում	100000	D-ն վճարվում է հայցորդի (ասպիրանտի) ղեկավարին
11.	Վերջին երկու տարում ԵՊՀ-ում աշխատող և 35 տարին չլրացած հայցորդի (ասպիրանտի) ատենախոսության պաշտպանություն	100000	D-ն վճարվում է թեկնածուական ատենախոսություն պաշտպանող աշխատողին
12.	Պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ստանալու համար	100000	D-ն վճարվում է պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ստացած աշխատողին

1.2. Աղյուսակ 1-ի 1-7-րդ կետերով սահմանված գումարները վճարվում են ԵՊՀ-ի այն աշխատողին, ով տպագրված հոդվածում կամ թեզիսում որպես իր աշխատավայր նշել է ԵՊՀ-ն և [ysu.am](http://ysu.am) համացանցային տիրույթում գրանցված իր էլեկտրոնային փոստի հասցեն:

1.3. Եթե հոդվածի կամ թեզիսի հեղինակը որպես իր աշխատավայր նշել է մեկից ավելի կազմակերպություններ, ապա նրան վճարվում է հասանելիք գումարի կեսը:

1.4. Մի քանի կետերի համապատասխանող հոդվածի համար հեղինակին վճարվում է գումարի առավելագույն չափ սահմանող կետով:

1.5. Աղյուսակ 1-ի 8-12-րդ կետերով սահմանված գումարները վճարվում են միայն ԵՊՀ-ի հիմնական աշխատողներին:

1.6. Աղյուսակ 1-ում սահմանված աշխատանքների կատարման համար, ԵՊՀ-ի աշխատողին վճարվող լրավճարի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել մեկ միլիոն ՀՀ դրամը:

1.7. Աղյուսակ 1-ի 1-8-րդ կետերով սահմանված աշխատանքների համար հատկացվող լրավճարները վճարվում են մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 31-ը ԵՊՀ-ի աշխատողների հաշվետվությունների էլեկտրոնային շտեմարանում (www.intranet.yasu.am) մուտքագրված աշխատանքների համար:

1.8. Աղյուսակ 1-ի 9-րդ, 11-րդ, 12-րդ կետերով սահմանված աշխատանքները հաշվառելու համար ԵՊՀ-ի հիմնական աշխատողը ԵՊՀ-ի գիտական քաղաքականության վարչություն է ներկայացնում դիպլոմի կամ վկայականի պատճենը:

1.9. Աղյուսակ 1-ի 10-րդ և 11-րդ կետերով սահմանված աշխատանքները հաշվառելու համար ԵՊՀ-ի հիմնական աշխատողը ԵՊՀ-ի գիտական քաղաքականության վարչություն է ներկայացնում ատենախոսության սեղմագիրը, դիպլոմի պատճենը և համապատասխան տեղեկանք կադրերի բաժնից:

1.10. ԵՊՀ-ի գիտական քաղաքականության վարչությունը հավաստիանալով ներկայացված փաստաթղթերի համապատասխանության մեջ կազմում և ԵՊՀ-ի ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ԵՊՀ-ի աշխատողներին լրավճար տրամադրելու մասին հրամանի նախագիծը:

1.11. Աղյուսակ 1-ում սահմանված աշխատանքների կատարման համար ԵՊՀ-ի աշխատողին լրավճարը վճարվում է յուրաքանչյուր տարվա հոկտեմբեր ամսվա ընթացքում:

**2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎՈՂ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ**

2.1. Երևանի պետական համալսարանի հիմնական աշխատողներին ուսումնամեթոդական գործունեության որոշ տեսակների իրականացման համար վճարվում են լրավճարներ համաձայն Աղյուսակ 2-ի.

**Աղյուսակ 2**

Հ/Հ	ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	ՄԻԱՎՈՐ ԱՇԽԱՏՆՔԻ ԳԻՆԸ (Ծ-Ն) (ՀՀ ԴՐԱՄ)	ՄԵԿ ԱՇԽԱՏՈՂԻՆ ՀԱՄԱՆԵԼԻՔ ԼՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ
1.	ԵՊՀ ֆակուլտետի գիտական խորհրդով երաշխավորված դասախոսությունների կամ ուսումնական (ուսումնամեթոդական) ձեռնարկի տեղադրում ԵՊՀ համացանցային պորտալում	1 կրեդիտին համարժեք նյութի արժեքը՝ 30000	Ծ-ի և կրեդիտների արտադրյալը բաժանվում է (համա)հեղինակների թվին
2.	ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորված բուհական դասագրքի հրատարակում	200000	Ծ-ն բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
3.	ԵՊՀ-ում օտարալեզու կրթական մոդուլի ներդրում	1 կրեդիտին համարժեք արժեքը՝ 30000	Ծ-ի և կրեդիտների արտադրյալը բաժանվում է (համա)հեղինակների թվին

4.	ԵՊՀ-ի աշակերտական օլիմպիադաների կազմակերպում	Յուրաքանչյուր առարկայից մեկ օլիմպիադայի արժեքը՝ 50000 գումարած յուրաքանչյուր մասնակցի համար ավելացում՝ 500	D-ն ֆակուլտետի դեկանի զեկուցագրի համաձայն բաժանվում է կազմակերպիչների թվին
5.	ԵՊՀ-ի ուսանողական օլիմպիադաների կազմակերպում	Յուրաքանչյուր առարկայից մեկ օլիմպիադայի արժեքը՝ 70000 գումարած յուրաքանչյուր մասնակցի համար ավելացում՝ 700	D-ն ֆակուլտետի դեկանի զեկուցագրի համաձայն բաժանվում է կազմակերպիչների թվին
6.	Հանրապետական օլիմպիադաների կազմակերպում	Յուրաքանչյուր առարկայից մեկ օլիմպիադայի արժեքը՝ 70000 գումարած յուրաքանչյուր մասնակցի համար ավելացում՝ 700	D-ն ֆակուլտետի դեկանի զեկուցագրի համաձայն բաժանվում է կազմակերպիչների թվին
7.	Միջազգային առարկայական ուսանողական օլիմպիադաներին ԵՊՀ-ի ուսանողների նախապատրաստում	Մեկ առարկայի համար՝ 300000	D-ն ֆակուլտետի դեկանի զեկուցագրի համաձայն բաժանվում է մարզիչների թվին
8.	ՈՒԳԸ-ի գիտական ղեկավարում	150000	D-ն վճարվում է ֆակուլտետի ՈՒԳԸ-ի գիտական խորհրդատուին
9.	ՈՒԳԸ-ի նստաշրջանի հրատարակված աշխատանքի ղեկավարում	Մեկ աշխատանքը՝ 15000	Աշխատողին վճարվում է D-ի և ղեկավարած աշխատանքների քանակի արտադրյալը

2.2. Աղյուսակ 2-ի 1 և 2 կետերով սահմանված աշխատանքների համար հատկացվող լրավճարները վճարվում են մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 31-ը ԵՊՀ-ի աշխատողների հաշվետվությունների էլեկտրոնային շտեմարանում ([www.intranet.yzu.am](http://www.intranet.yzu.am)) մուտքագրված աշխատանքների համար

2.3. Աղյուսակ 2-ի 3-8 կետերով սահմանված աշխատանքները հաշվառելու համար ԵՊՀ-ի աշխատողը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 10-ը ԵՊՀ-ի ուսումնամեթոդական վարչություն է ներկայացնում իր կատարած աշխատանքների վերաբերյալ ֆակուլտետի դեկանի զեկուցագիրը՝ կցելով համապատասխան հիմքերը:

Ուսումնամեթոդական վարչությունը կազմում և ԵՊՀ-ի ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ԵՊՀ աշխատողներին լրավճար տրամադրելու մասին հրամանի նախագիծը:

2.4. Աղյուսակ 2-ում սահմանված աշխատանքների կատարման համար ԵՊՀ-ի աշխատողին վճարվող լրավճարի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել չորս հարյուր հազար ՀՀ դրամը:

2.5. Աղյուսակ 2-ում սահմանված աշխատանքների կատարման համար ԵՊՀ-ի աշխատողին լրավճարը վճարվում է յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր ամսվա ընթացքում: Աղյուսակ 2-ի 2, 4, 7 և 8 կետերով սահմանված աշխատանքների համար լրավճար հատկացվում է միայն ԵՊՀ հիմնական աշխատողներին:

### **3. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1. Ուսանողական հարցման արդյունքներով Երևանի պետական համալսարանի դասախոսներին, բացառությամբ ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսների, անցկացվող մրցույթի արդյունքներով վճարվում է լրավճար՝ համաձայն սույն բաժնի 3.2.-3.4. կետերով սահմանված կարգի:

3.2. Ուսանողական հարցման արդյունքներով մրցույթն անցկացվում է յուրաքանչյուր ուսումնական կիսամյակ նախորդ ուսումնական կիսամյակի արդյունքների հիման վրա: Մրցույթին մասնակցում է բացառապես այն դասախոսը, ում գնահատել է առնվազն 25 ուսանող:

3.3. Երևանի պետական համալսարանում ուսանողական հարցման արդյունքներով կազմակերպվող մրցույթի մասնակից դասախոսները բաժանվում են երեք խմբի.

ա) Առաջին խմբում անցկացվող մրցույթին մասնակցում է այն դասախոսը, ում դիտարկվող ուսումնական կիսամյակում գնահատել է 25-50 ուսանող: Այս խմբում մրցույթին մասնակցած և առավելագույն միավորներ ունեցող 30 դասախոսների (գումարած կիսանցողիկ միավորներ ունեցող դասախոսների թիվը) վճարվում է լրավճար՝ նրանց մեկ ամսվա աշխատավարձի 50 տոկոսի չափով:

բ) Երկրորդ խմբում անցկացվող մրցույթին մասնակցում է այն դասախոսը, ում դիտարկվող ուսումնական կիսամյակում գնահատել է 51-100 ուսանող: Այս խմբում մրցույթին մասնակցած և առավելագույն միավորներ ունեցող 25 դասախոսների (գումարած կիսանցողիկ միավորներ ունեցող դասախոսների թիվը) վճարվում է լրավճար՝ նրանց մեկ ամսվա աշխատավարձի 60 տոկոսի չափով:

գ) Երրորդ խմբում անցկացվող մրցույթին մասնակցում է այն դասախոսը, ում դիտարկվող ուսումնական կիսամյակում գնահատել է 101 և ավելի թվով ուսանող: Այս խմբում մրցույթին

մասնակցած և առավելագույն միավորներ ունեցող 15 դասախոսների (գումարած կիսանցողիկ միավորներ ունեցող դասախոսների թիվը) վճարվում է լրավճար՝ նրանց մեկ ամսվա աշխատավարձի 70 տոկոսի չափով:

Եթե սույն կետի «ա», «բ», «գ» ենթակետերի կիրարկման արդյունքում որևէ ֆակուլտետի բոլոր դասախոսները չեն ընդգրկվել լրավճար ստացողների ցանկում, ապա տվյալ ֆակուլտետում առնվազն 25 ուսանողի կողմից գնահատված դասախոսներից առավելագույն միավոր ունեցող մեկ դասախոսի վճարվում է լրավճար՝ նրա մեկ ամսվա աշխատավարձի 50 տոկոսի չափով:

3.4. Ուսանողական հարցման արդյունքում լավագույնը ճանաչված համահամալսարանական ամբիոնի մեկ դասախոսի (գումարած կիսանցողիկ միավորներ ունեցող դասախոսների թիվը) վճարվում է լրավճար՝ նրա մեկ ամսվա աշխատավարձի 60 տոկոսի չափով:

3.5. Ուսանողական հարցման արդյունքներով անցկացվող մրցույթի արդյունքներն ամփոփում է ԵՊՀ-ի ուսումնամեթոդական վարչությունը և ԵՊՀ-ի ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ԵՊՀ-ի աշխատողներին լրավճար տրամադրելու մասին հրամանի նախագիծը:

3.6. Ուսանողական հարցման արդյունքներով ԵՊՀ-ի աշխատողին լրավճարը վճարվում է յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր և հունիս ամիսներին:

Սույն կարգով լրավճար ստանալու համար պահանջվող տվյալները կեղծելու դեպքում հեղինակը ստանում է նկատողություն և 3 տարի ժամկետով զրկվում լրավճար ստանալու իրավունքից: